«Էդիտ պրինտ» հրատարակչություն

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Էքրսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում

Հաստատություն՝ Ամենագետներ նախակրթարան

Դաստիարակ՝ Ալյա Հարությունյան

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... 3

Էքրսկուրսիաների և մշակութային այցերի դերը երեխաների անհատականության զարգացման գործընթացում.....5

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ.....;.....5

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ.....9

Եզրակացություններ.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության և դաստիարակության մեթոդների շարքում, երբ ուսումնասիրում ենք որևէ կրթական ծրագիր կամ մեթոդական ձեռնարկ , շատ դեպքերում մեծ տեղ է հատկացված էքրսկուրսիաներին և մշակութային այցերին։ Պատմության մեջ չկան հստակ փաստեր, թե երբ, ում կողմից է առաջին անգամ դրանք իրականացվել, բայց որպես ուսումնական մեթոդ էքրսկուսիաները սկսեցին ներմուծվել կրթական գործտնթաց Արևմտյան Եվիոպայի և Ռուսաստանի դաստիարակների կողմից 18_րդ դարի վերջին19_րդ դարի սկզբին։Բառն ունի մատինական ծագում, իսկ ռուսեիենից թարգմանաբար նշանակում է արշավանք։ Ճիշտ կազմակերպված և անցկացված էքրսկուրսիան և մշակութային այցերը ինքնին այնպիսի միջեց են, որի օգնությամբ մենք կարող ենք դիտարկել և շտկել երեխաների վարքային խնդիրները, որոնք միշտ չէ որ տեսանելի են սովորական պարապմունքների ժամանակ։ Սա հիանալի հնարավորություն է մասնակիցների հետ դիտարկման մեթոս կիրառելու համար։ Պայմանավորված ներկայիս երեխաների պահանջմունքների փոփոխությամբ, դաստիարակության մեթոդների վերանայման անհրաժեշտությամբ էքրսկուրսիաների և մշակութային այցերը դարձել են կարևորագույն պայման երեխայի զարգացման համար։ Դրանք բազմիցս ուսումնասիրվել են մի շարք հետազոտողների կողմից ,սակայն թեման արդիական է մինչև օրս։

Աշխատանքի նպատակն է՝ Երեխաների զարգացման մեջ էքրսկուրսիաների և մշակութային այցերի դերի բացահայտումը։Թեմայի նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել էքրսկուրսիաները և մշակութային այցերը՝ որպես ուսուցման կազմակերպման ձև
- Դիտարկել դրանց կապը էկոլոգիական դաստիարակության շրջանում
- Կատարել փորձարարական հետազոտություն դաստարակների շրջանում՝ միտված նրանց տեղեկացվածության արդյունքների վերլուծմանը։
- Աշխատանքի ծավալը և կառուցվածքը՝ աշխատանքը բաղկացած է տիտղոսաթերթից, բովանդակությունից, երկու գլխից՝ տեսական և փորձարարական, եզրակացություններից, գրականության ցանկից։ Համակարգչային շարվածքով աշխատանքը կազմում է էջ։

Էքրսկուրսիաների և մշակութային այցերի դերը երեխաների անհատականության զարգացման գործընթացում:

Էքսկուրսիաները արշավներից տարբերվում են բոլոր պարամետրերի ավելի փոքր ծավալով, բնության գրկում լինելու տևողության, մանկավարժական խնդիրների, գործունեության թվի, ձևերի պատրաստվածության և հանդերձանքի առումով: Դրանք ավելի հեշտ է կազմակերպել և այդ պատճառով էլ կարող են ավելի հաճախ անցկացվել քան արշավները**:** Էքսկուրսիաների միջոցով երեխան անմիջականորեն առնչվում ե բնությանը, ձեռք բերում որոշակի գիտելիքներ: Երեխաները բնությունից օժտված են հետաքրքրասիրությամբ: Բնական հետաքրքրասիրությունը նրանց առաջնորդում է դեպի արդյունավետ ուսումնասիրության Դրանց ընթացքում մենք կարող ենք տեսնել յուրաքանչուր երեխայի առանձնահատկությունները և մանկական թիմը՝ որպես ամբողջություն: Հենց այցերի ժամանակ , երբ երեխաները գտնվում են ոչ սովորական մկջավայրում, կարելի է նկատել դաստիարակի մասնագիտական գործունեության թերությունները: Ի դեպ ինչպես ցույց է տալիս պրակտիկան նրանք մեծ հաշվով նույնն են բոլոր մանկական խմբերում: Երեխաները շատ հաճախ չեն կարողանում տեսնել իրենց շրջապատող մարդկանց, նրանք չունեն միմյանց զիջելու հմտություն: Նրանք նույնիսկ չգիտեն՝ ինչպես հարցնել այդ մասին ուրիշներին : Բազմաթիվ էքրսկուրսիաների փորձն ու պրակտիկան ցույց են տալիս , որ լրացուցիչ կրթոըթյան մեջ ներգրավված երեխաների խմբերում այդ խնդիրը բացակայուն է՝ թատերական խմբեր, մարմնամարզական խմբակներ՝ որտեղ երեխաներին սովորեցնում են իրենց գործընկեր զգալ բեմում: Եզրակացություն,որ լրացուցիչ կրթությունը նպաստում է դրանց ճիշտ կազմակերպմանը: Էքրսկուրսիաներն ու մշակութային այցերն առաջին հեիթին տեղեկատվական են : Հաճախ երեխաները չեն ընկալում բացատրությունների իմաստը, քանի որ նրանք չեն կարողանում բանավոր տեղեկատվություն ընկալել: Էքրսկուրսիաները դեպի մշակութային վայրեր օգնում են երեխաներին ընկալել,որ կան հաստատություններ, ուստեղ անհրաժեշտ է պահել հանգիստ և գրագետ: Ի վերջո էքրսկուրսիաները կարող են օգտագործվել և որպես կրթության, ինքնուրույնության ձև և որպես մշակութային ժամանցի կրթական կազմակերպման ձև: Մեթոդաբանությունը պահանջում է ,որ դրանց նկատմամբ հետաքրքրությունը պետք է ձևավորվի դաստիարակի կողմից , ով օգտագործում է աշպատանքի այս հիանալի ձևն իր պրակտիկայում, նախօորոք որևէ միջոցառումից առաջ կամ հետո: Դաստիարակի դերը կայանում է նրանում , որ նա պետք է երեխաների խմբում առաջացնի հետաքրքրություն էքրսկուրսւոն նյութի նկատմամբ, ապահովի էքրսկուրսիաների կազմակերպման մտավոր ուղղությունը: Ցանկացած էքրսկուրսիա պահաջում է լարել ուծադնությունը: Կարևոր է ,որ դաստիարակը և էքրսկուրսիային մասնակից երեխաները հասկանան դրա կարևորությունը , մտածեն այն մասին, թե ինչպես այն կանցի, հետաքրքրում է

արդյոք: Ամեն բան կախված է էքրսկուրսիայինկազմակերպման մակարդակից , մասնակիցների վարքագծիծ:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Էկոլոգիական մտածելակերպի դաստիարակությունը ավագ սերնդի կողմից դաստիարակության, կրթության, բարոյական որակների ու հոգևոր այլ արժեքների փոխանցումն է, մատաղ սերնդին: Նրանց մեջ ձևավորում է բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունք, բնօգտագործման կարողություններ ու հմտություններ: Էկոլոգիական դաստիարակության հիմնական նպատակը դառնում է բնության նկատմամբ արժեքային ճիշտ կողմնորոշումների, բնապահպանական ընդունակությունների, պատասխանատու վերաբերմունքի, բնության մեջ ճիշտ վարքագծի ունակությունների դրսևորումը և էկոլոգիական կուլտուրայի ձևավորումը: Այսինքն՝ էկոլոգիական ճանաչողական դաստիարակություն ասելով հասկանում ենք երեխային կենդանական և անկենդան աշխարհի տարրերի և բնական երևույթների հետ ծանոթացնելով, ուսուցանել, դաստիարակել և գործընթացի ամբողջական միասնությամբ զարգացնել երեխայի էկոլոգիական կուլտուրայի և աշխարհայացքի ձևավորումը: Էկոլոգիական դաստիարակության գործընթացը կազմակերպվում է մեծահասակների կողմից ընտանիքում և մանկապարտեզում և իրականացվում է մի շարք միջոցներով և հմտություններով: Հիմնական միջոցը բնությունն է, բնության հետ շարունակական շփումը: Երեխայի մշտական կապը բնության հետ ապահովվում է մանկապարտեզի բնության անկյան և բնաճանաչողական պատի միջոցով: Երեխան մեծահասակների օգնությամբ ծանոթանում է բնության երևույթներին, ինքնուրույն հետևում բնության մեջ տեղի ունեցող փոփոխություններին, առանձնացնում է կենդանի և անկենդան բնության տարբերությունները, դրանց մեջ եղած կապը: Առօրյա կյանքում նախադպրոցականների հետ կարելի է անցկացնել գործունեության տարբեր ձևերով հագեցած և հսկայական զարգացնող նշանակություն ունեցող բովանդակալից միջոցառումներ: Երեխաների համար օգտակար և հետաքրքիր են մոտակա շրջապատում բնության գրկում զբոսանքները:

ԷՔՐՍԿՈՒՐՍԻԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՅՑԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՒՊՄԱՆ ՁԵՎ

Դաստիարակը կարող է երեխաների հետ դուրս գալ կարճատև զբոսանքների, որոնք ունեն մեկ կոնկրետ նպատակ, և կարող է նաև կազմակերպել էքսկուրսիաներ, արշավներ: Էքսկուրսիաները արշավներից տարբերվում են բոլոր պարամետրերի ավելի փոքր ծավալով, բնության գրկում լինելու տևողության, մանկավարժական խնդիրների, գործունեության թվի, ձևերի պատրաստվածության և հանդերձանքի

առումով: Դրանք ավելի հեշտ է կազմակերպել և այդ պատճառով էլ կարող են ավելի հաճախ անցկացվել քան արշավները:

Էքսկուրսիաների միջոցով երեխան անմիջականորեն առնչվում ե բնությանը, ձեռք բերում որոշակի գիտելիքներ: Երեխաները բնությունից օժտված են հետաքրքրասիրությամբ: Բնական հետաքրքրասիրությունը նրանց առաջնորդում է դեպի արդյունավետ ուսումնասիրության:

Դիտումների ընթացքում երեխան հնարավորություն է ունենում ծանոթանալու, տեսնոլու, ճանաչելու առարկան և երևույթը:Այդ ընթացքում ձևավորվում են իմացական գիտելիքներ: Էքսկուրսիան երեխաներին բնության հետ ծանոթացնելու պարապմունքների տեսակներից մեկն է: Էքսկուրսիաների ընթացքում երեխաները բնական վիճակում կարող են դիտել բնության երևույթները, եղանակային փոփոխությունները, տեսնել, թե մարդիկ ինչպե՞ս են վերափոխում բնությունը իրենց պահանջմունքներին համապատասխան և ինչպես է բնությունը ծառայում իրենց: Էքսկուրսիաների առավելությունն այն է, որ երեխաները հնարավորություն են ունենում տեսնել կենդանիներին և բույսերին իրենց բնական միջավայրում: Այս ընթացքում երեխաների մոտ զարգանում է դիտողականությունը, հետաքրքրությունը ուսումնասիրվող բնության հանդեպ: Նրանք վարժվում են ուշադրությամբ զննել առարկան, նկատել նրա բնորոշ հատկանիշները:

Էքսկուրսիաները որպես պարապմունքի կազմակերպման ձև կիրառվում են միջին և ավագ խմբերում: Բնագիտական էքսկուրսիաները անցկացվում են որոշակի սիստեմով: Նպատակահարմար է դրանք կազմակերպել միևնույն օբյեկտներում տարվա տարբեր եղանակներին, որպեսզի ցույց տրվի բնության մեջ եղանակային փոփոխությունները:

Էքսկուրսիաների, զբոսանքների ժամանակ կամ խմբասենյակում անցկացվող դիտումները զուգակցվում են համապատասխան զրույցներով: Այդ ընթացքում երեխային տրվում են որոշակի գիտելիքներ: Անհրաժեշտ է ոչ միայն հաղորդել գիտելիքներ, այլև երեխայից ստանալ որոշակի հարցերի պատասխաններ և համագործակցել նրանց հետ: Էքսկուրսիաների և զբոսանքների ընթացքում անցկացվող զրույցները, բացի իմացական գիտելիքների ձևավորումից, նպաստում են նաև գեղեցիկի նկատմամբ հոգատար վերաբերմունքի դրսևորմանը: Այս դեպքում երեխայի մեջ բնության նկատմամբ չի դրսևորվի սպառողական վերաբերմունք: Նա կդառնա շրջապատի ու միջավայրի նկատմամբ ուշադիր, խնամքով կվերաբերվի և հոգատարությամբ կլցվի բնության ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների հանդեպ: Դա բնապահպանական խնդիրներից մեկն է և արդիականության հրամայական պահանջը: Էքսկուրսիաների ընթացքում ձեռք բերած գիտելիքները ընդլայնվում և ամրապնդվում են պարապմունքների, խաղերի, բնության անկյունում

դիտարկումների միջոցով: Էքսկուրսիայից 2-3 օր հետո դաստիարակը անցկացնում է պարապմունքներ քարտերով, նկարչությամբ, բնագիտական նյութերով,

խաղերի օգնությամբ, ինչպես նաև կարդում տվյալ թեմայի վերաբերյալ գեղարվեստական գրականություն,

ունկնդրում երեխաների պատմությունները այն մասին, թե որտեղ են եղել, ինչ են տեսել: Վերջում անցկացվում է ամփոփիչ ընդհանրական զրույց: Արշավը հետաքրքիր համալիր միջոցառում է, որի ժամանակ լուծվում են բազմաթիվ մանկավարժական խնդիրներ՝ առողջարար, ճանաճողական, բնապահպանական, գեղագիտական և այլն:

Արշավը կոմպլեքսային միջոցառում է ոչ միայն իր խնդիրների և գործունեության ձևերի համադրմամբ, այլ նախ և առաջ իր կազմակերպմամբ: Արշավը պլանավորում, պատրաստում են մի քանի մեծահասակներ, էկոլոգը, ֆիզկուլտուրայի դաստիարակը, բուժքույրը, մեթոդիստը և խմբի դաստիարակը: Նրանք համատեղ մշակում են արշավի պլանն ու սցենարը, որոշում են երթուղին, և և դրա ընթացքում առաջացող տարբեր խնդիրների լուծումը:

Դաստիարակը մեթոդիստի հետ որոշում են, թե ինչպիսի դիտարկումներ կարելի է անցկացնել երեխաների հետ որոշված վայրում, տարվա տվյալ եղանակին, ինչպիսի նշանակալի էկոլոգիական օբյեկտներ կարելի է ցույց տալ երթուղու ժամանակ: Բնության գրկում երեխաների գեղագիտական դաստիարակությունը սկսվում է մաքրույթյան ցուցադրումից: Դաստիարակները ցույց են տալիս, որ գեղեցիկ է ցանկացած տարածք, եթե այն մաքուր է և խնամված, և հակառակը, անտառի բացատի աղտոտված հատվածները գեղեցիկ չեն: Բնական շրջապատը պետք է լավ հետազոտված և ուսումնասիրված լինի մեծահասակի կողմից, ինչը թույլ կտա ճշգրիտ կազմել երթուղին, պլանավորել կանգառների և դադարների ժամը և վայրը, թույլ կտա որոշել դիտարկումների և գործունեության այլ ձևերի բովանդակությունը: Նախադպրոցական տարիքի երեխաներին կարելի է ներգրավվել բնապահպանական ակցիաների՝ սոցիալապես նշանակալի միջոցառումներում, որոնք նախադպրոցական հաստատությունում կարող են անցկացվել համատեղ աշխատակիցների և երեխաների, իսկ հնարավոր է նաև ծնողների մասնակցությամբ: Ակցիաները որպես կանոն նվիրվում են հասարակական նշանակություն ունեցող որոշակի իրադարձություններին, այդ պատճառով էլ երեխաների վրա ուժեղ դաստիարակչական ներգործություն են ունենում:

Երեխաների համար մատչելի և հասկանալի ակցիաները կարելի է անցկացնել այնպիսի նշանակալի միջազգային իրադարձությունների առթիվ, ինչպիսիք են ջրի օրը (մարտի սկզբին), Երկրի օրը (ապրիլի 22) և այլն: Ավագ նախադպրոցական տարիքում երեխաները արդեն կարող են հասկանալ ջրի նշանակությունը բոլոր կենդանի

էակների համար, ուստի ջրի պաշտպանությունը և խնայողաբարօգտագործմանն ուղղված ակցիան դրական ազդեցություն կունենա երեխաների վրա:

Այսպիսով էկոլոգիական դաստիարակության կազմակերպման ձևերն են.

✓ էքսկուրսիաները և արշավները,

✓ բացօթյա կամ բնության գրկում կազմակերպվող հանդեսներն ու տոնակատարությունները,

✓ բնաճանաչողական տոնահանդեսները /ծաղկի տոն, բերքահավաքի տոն, վարդավառ/,

✓ էկոլոգիական բնույթի միջոցառումները՝ շաբաթօրյակները, ծառատունկը,

միջավայրի բարեկարգումը և այլ:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՈՒսումնասիրելով խնդիրը իրականացվել է փորձարարական հետազոտություն մանկապարտեզի դաստիարակների շրջանում: Հետազոտության մասնակցել են թվով 15 դաստիարակ:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ դաստիարակների իրազեկվածության մակարդակի բացահայտումը: Հետազոտական աշխատանքի համար կազմվել է հարցաթերթիկ և տրվել դաստիարակներին: Ստորև ներկայացված է հետազոտության վերլուծքության արդյունքները գրաֆիկների տեսքով:

Ինչպես եք գնահատում էքրսկուրսիաների դերը երեխաների զարգացման համատեքստում:

Copy

10 responses



Կիրառում եք արդյոք ուսուցման միջոցը Ձեր աշխատանքում:

Copy

10 responses



Էքրսկուրիաների արդյունքում՝

Copy

10 responses



Ինչպես կգնահատեք մշակութային այցերի դերը երեխայի կյանքում:

Copy

10 responses



Հաստատությունում որտեղ աշխատում եք՝

Copy

10 responses



Նշեք մեկ դրական կողմ, որի շնորհիվ կարևորում եք նախակրթարաններում իրականացվող մշակութային այցերը:

10 responses

Երեխաների մեջ սերմանվող ազգասիրությունը

Արժեհամակարգի ձևավորում

Երեխաները ներգրավվում են աշխատանքում:

Երեխաներին տրբող տեզեկատվությունը առավել հեշտ է ընկալվում

Երեխաներին դուրնէ գալիս շրջայցերը

Դրանք բարձրացնում են երեխաների իրազեկվածությունը

Երեխաներն առավել հաճույքով են ներգրավվում աշխատանքներում

Երեխաներն առավել կարևորում են ազգայինը,

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով թեմայի վերաբերյալ տեսական գրականություն և կատարելով փորձարարական հետազոտություն երել ենք հետևյալ եզրահանգումներին՝

- Էքրսկուրսիաներն ու մշակութային այցերն առաջին հեիթին տեղեկատվական են ։ Հաճախ երեխաները չեն ընկալում բացատրությունների իմաստը, քանի որ նրանք չեն կարողանում բանավոր տեղեկատվություն ընկալել։ Էքրսկուրսիաները դեպի մշակութային վայրեր օգնում են երեխաներին ընկալել,որ կան հաստատություններ, ուստեղ անհրաժեշտ է պահել հանգիստ և գրագետ։ Ի վերջո էքրսկուրսիաները կարող են օգտագործվել և որպես կրթության, ինքնուրույնության ձև և որպես մշակութային ժամանցի կրթական կազմակերպման ձև։
- Էկոլոգիական մտածելակերպի դաստիարակությունը ավագ սերնդի կողմից դաստիարակության, կրթության, բարոյական որակների ու հոգևոր այլ արժեքների փոխանցումն է, մատաղ սերնդին: Նրանց մեջ ձևավորում է բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունք, բնօգտագործման կարողություններ ու հմտություններ: Էկոլոգիական դաստիարակության հիմնական նպատակը դառնում է բնության նկատմամբ արժեքային ճիշտ կողմնորոշումների, բնապահպանական ընդունակությունների, պատասխանատու վերաբերմունքի, բնության մեջ ճիշտ վարքագծի ունակությունների դրսևորումը և էկոլոգիական կուլտուրայի ձևավորումը:
- Իրականացնոլով փորձարարական հետազոտություն և վերլուծելով արդյունքները պարզ դարձավ, որ այժմյան դաստիարակների գերակշռող մեծամասնությունը հացվածների մեջ կարևորում են ուսուցման արդյունավետ իրականացման համար կազմակերպվող էքրսկուրսիաների և մշակութային այցերի դերը երեխաների լիարժեք և համակողմանի զարգացման համար ։ Աշխատանքում արդյունավետորեն կիրառում են աշխատանքի կազմակերպան ձևը և ըստ արդյունքների տեսում դրական շարժ։

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատրյան Լ. Թ. Սարգսյան Փ.Ա.

Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը: Երևան 2002.

2. Մարտիրոսյան Գ. Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում: Երևան 2007.

3. Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան Նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2005

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Николаева С.Н. “Теория и методика экологического образования

детей’’ М. 2002.

2. Николаева С.Н. ‘Методика экологического воспитания

дошкольников’’ М. 2001

3. Каменева Л. А. <<Как знакомить дошкольников с природой>>. М., 1983

г.

4. Николаева С. М. <<Теория и методика экологического образованиядетей>>, изд. центр Академия 2002.